

փորձեցել ինքնամեղադրութեամբ զօրացնել ձեր մէջ՝ կարող ըլլալու գաղափարը (տես՝ Տըմ. Վաշէի յօդուածը ներկայ Թիւին մէջ):

Ք Ի Թ Ի Ա Ր Ի Ի Ն Ի Լ Ը

(Կ. Մ.— ՍԵՆՑԻՄԵՆՏ).— Ձեր հարցումին տալով յօդուածով պատասխանեալ եմ այս Թիւին մէջ:

Գլխու քեփին, հերամպիութեան, դէմքի բշտիկներուն, ջուր խմելու մասին եւ այլ հարցումներուն պատասխանները յաջորդով:



**ՓԱՐԻՋԻ ՀԱՅ
ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ**

Փարիզի Բժշկական Միութիւնը, երկու ամիս դադարէ ետք իր ամսական նիստը գումարեց հոկտ. 19ին: Ներկայ էին 22 հոգի: Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցումէն վերջ, Տըմ. Զօլօեան պարզեց 1927—28 շրջանին, Միութեան աշխատութեանց ծրագիրը: Որոշուեցաւ, Նիւ Թապէս եւ Բարոյապէս օժանդակել Յարդգող Միութեան Նախագիտութեամբ կազմակերպուած «Սանասարեան Գիշերային Դասընթացին», ուր տեղի պիտի ունենան առողջապահական դասախօսութիւններ եւ տալ հրապարակային ուրիշ դասախօսութիւններ բժշկական կամ կէս—բժշկական նիւթերու շուրջ:

Զետոյ խօսք առաւ օրուան դասախօսը Տըմ. Մանուէլեան (Կ. Պոլսէն) որ շահեկան ուսումնասիրութիւն մը կարդաց «Արդի վիրաբուժութեան ձգտումներուն մասին»: Այս նիւթին մասին խօսեցան նաեւ Տըմ. Եաղուպ, Տըմ. Զօլօեան, Տըմ. Ս. Եղիազարեան (Թաւրիզէն) եւն: Ընդհանուր եզրակացութիւնը եղաւ այն որ ներկայիս վիրաբուժութիւնը հետզհետէ պահպանողական կը դառնայ, այսինքն վիրաբոյժները կը ջանան վիրաբուժական բազմաթիւ հիւանդութիւններ բժշկական միջոցներով դարմանել (դեղ, ճառագայթ, ֆիզիքական ուժեր եւն) եւ անհրաժեշտ պարագաներուն մէջ միայն նշրբակը կը դիմեն:

**ՄԱՐՍԸԼԷՆ ՊԵՐԹՇԼՈՅԻ
ՀԱՐԻՐԻՐԱՄԵԱԿԸ**

Հոկտեմբերի վերջերը Թրանսա տունց հարիւրամեակը հոգաւաւոր քիմիագէտ Մ. Պերթըլոյի, որ մինչևայն ատեն պետական կեանքին մէջ կարեւոր դեր խաղաց: Քիմիայի եւ բնագիտութեան մէջ Պերթըլի կատարած գիտութիւն շնորհիւ (*thermochimie, synthèse* եւն.) հարտարարութեամբ իսկայ նուաճումներ ըրաւ: Պերթըլօ հաստատեցաւ էր որ պիտի գայ օր մը (2000 Թուականին), ուր քիմիան սնունդի հոգը պիտի անհետացնէ, որովհետեւ ամէն մարդ պիտի գտնէ պատրաստ եւ առատ սնունդ, քիմիական փոքրիկ զնէիկներու ձեւին տակ...

**Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Մ Ն Ն Ա Վ Ա Ն
ԴԱՍԸՆԹԱՑԸ**

Փարիզի քաղաքապետութիւնը, ժողովուրդին համար բացած է առողջապահական դասընթաց մը Առողջապահութեան Թանգարանին մէջ, պղլվար Սեպատտփօլի վրայ, Թիւ 57: Դասախօսութիւններ տեղի կ'ունենան ամէն երեքշաբթի եւ Ուրբաթ երեկոները, ժամը 8.30ին: Դասախօսներն են Նշանաւոր մասնագէտներ: Ամբողջ դասընթացը պիտի բաղկանայ 44 դասախօսութիւններէ եւ պիտի շոջարին առողջապահական ամէն կարգի հարցեր. — սննդական, տղոց առողջապահութեան, կամքի, հիւանդութիւններու մասին: Մուտքը ազատ է: